

Աստղիկ Մինասյան

ՀՊՄՀ

arev055@mail.ru

ԵԶՐԻԱԿԱՆ ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Արդի գիտության մեջ գնալով աճում է հետաքրքրությունը ծեսերի ու սովորույթների նկատմամբ, քանի որ դրանց ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռնում ոչ միայն բացահայտելու մշակութային այդ երևույթի պատմական զարգացման փուլերն ու էությունը, այլև դրա կենցաղավարման յուրատիպ ձևերի անդրադարձմամբ ներթափանցելու ժողովրդի սոցիոնորմատիվ մշակույթի ամենաբազմազան ոլորտները, վեր հանելու էթնիկ ավանդույթի բազում յուրօրինակ գծեր: Անհրաժեշտ է բազմակողմանիորեն ուսումնասիրել անցյալի էթնոմշակութային ժառանգությունը նաև այն առումով, որպեսզի այն ամեն դրականն ու բուն ժողովրդականը, ինչը դիմացել է ժամանակի քննությանը ու հասել մեզ, կարողանանք ի սպաս դնել այսօրվա խնդիրների կատարմանը:

Հուղարկավորության ծեսը դասվում է առավել փակ և ավելի քիչ ձևափոխության ենթարկվող արարողությունների շարքին: Հուղարկավորության ծեսի կարևորագույն բաղադրիչներն են զոհ մատուցելը, հոգեհաց տալը, հոգևորականի կողմից համապատասխան կրոնական հիմներ արտասանելը: Ընդունված է տարին մեկ անգամ գնալ գերեզման և մահացածների համար հոգեհաց տալ¹: Հետաքրքիր է նաև անրադառնալ այս հանգամանքին, որ եզդի Եհովայի վկաների մոտ թաղումը կատարվում է ըստ Եհո-

¹ Եզդիների կրոնական աշխարհընկալումը, <https://zbosavari.home.blog/-2018/11/17/%D5%A4%D5%A1%D5%BD%D5%A5%D6%80%D5%AF%D6%80%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%B5%D5%AC%D5%AF%D6%80%D5%B8%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/>, (24.11.2021)

վայի վկաների կրոնի օրենքների: Այսպես եզդի Եհովայի վկաները թաղման ժամանակ հրաժարվում են թե՛ հոգեհանգստի արարողությունից, թե՛ ինքնահողից, յոթից ու քառասունքից, թե՛ թաղմանը ուղեկցող երաժշտությունից ու հոգեհացից՝ նշելով, որ այդ ամենի մասին Աստվածաշնչում հիշատակում չկա, այդ պատճառով էլ չի կարող կատարվել²:

Մահվան անխուսափելիության գաղափարն հավասարապես ներկայացված է ն՛ եզդիական ուսմունքի, և՛ ժողովրդական ասացվածքների մեջ: Համաձայն այդ ասացվածքներից մեկի՝ մահն Աստծո հրամանն է: Հոգին (*ruh*), որը բնակեցրել է մարմինը (*qālib*) ծննդյան առաջին շնչի հետ, մահվան ժամանակ լքում է այն: Եզդիները հավատում են մահվան անխուսափելիությանը և այն համարում են Աստծո շնորհը՝ “*mirin amrē Xwadēye*” («մահը Աստծո հետ կյանքի սկիզբն է»), “*mirin qirārā Xwedēya*” («մահը Աստծո կամքն է»): Մարդն ապրում է այնքան ժամանակ, որքան Աստված է որոշում նրա կյանքի ժամանակը: Միայն Աստված է անմահ և հավիտենական, մնացած բոլորը, և մարգարեները, և սրբերը, և նույնիսկ հրեշտակները մահկանացու են³:

Եզդիների մոտ հուղարկավորման արարողությունը հիմնված է հանգուցյալների և ողջերի միջև եղած ամուր կապի հանդեպ հավատքի վրա: Հուղարկավորության ծեսում կենտրոնական դերը վերապահված է հոգևորականների և մասնավորապես հանգուցյալի հանդերձյալ կյանքի եղբորը (*birē āxiratē*)⁴, որը մահվան կամ մահվան տանջանքի պահից մինչև հուղարկավորու-

² Մեյեդեհնասիմ Ֆ., Օտերի և ավանդույթների փոփոխությունները կրոնափոխ եզդիների (Եհովայի վկաներ) շրջանում, էջ 215-216:

³ Авдоев Т. В., Историко-теософский аспект езидизма, Приложение № 15. Май 2011, стр. 280.

⁴ Omerxali X., sistema ocax, qebîl û eşîrên êzdiyan: têrminolojiya wan: Յուրաքանչյուր եզդի պետք է ունենա Ավագ, Շեյխ, հոգևոր հյուրընկալող, հոգևոր ուսուցիչ և Հետագայի եղբայր և/կամ Հետագայի քույր՝ իրենց հատուկ պարտականություններով: Այսինքն՝ այս աշխարհում յուրաքանչյուր եզդի պետք է ունենա այս հինգ հոգին, որոնց հոգևոր հարաբերությունները նրա հետ պարզ են, էջ 13:

թյան ծեսի ավարտը անբաժանելիորեն գտնվում է իր տանը⁵: Երբ տանը պարզ է դառնում, որ մարդը մահանալու է, նրա մոտ են հավաքվում բոլոր ազգականները, ովքեր մինչև մահվան պահն այդտեղ են մնում: Նրանք պահպանում են լռություն, որպեսզի չխանգարեն մահացողին: Կանչում են շեյխին⁶ և փիրին⁷, ով, նստելով մահացողի գլխավերևում, հատուկ աղոթքներ է կարդում: Եթե հանգուցյալը տառապում է և չի կարողանում հոգի տալ, որպեսզի, ինչպես քրդերն են ասում, հանգուցյալը կրկնակի հոգի չտա, նրա վրա գցում են հակառակ շրջած պարկ, իսկ հոգևորականը այդ ընթացքում շարունակում է ջանասիրաբար աղոթքներ կարդալ⁸:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայումս եզդիների թաղման (*šim*) (շին նշանակում է *umq*) ժամանակ պարտադիր պայման է, որ ներկա գտնվեն եզդիների հոգևոր դասի ներկայացուցիչները (շեյխն ու փիրը): Յուրաքանչյուր եզդի ընտանիք կամ գերդաստան ունի իր և՛ շեյխ, և՛ փիր, որն ընտրվում է ըստ հատուկ արարողակարգի, որը կոչվում *dast dā min* (ձեռք

⁵ **Авдоев Т. В.**, Историко-теософский аспект езидизма, Приложение № 15. Май 2011, с. 280.

⁶ **Cherchi M., Platz, S. & Tuite, K.** (1996). Yezidis: Encyclopaedia of World Cultures. Retrieved at

Քաղաքական կազմակերպություն Իրաքի եզդիները ճանաչում են երկու առաջնորդների՝ գլխավոր շեյխին (տե՛ս «Մոցիալական կազմակերպություն») և Էմիր ալ-Ումարին (հայտնի է նաև որպես Միրզա Բեգ), որը նրանց ժամանակավոր իշխանությունն է և արտաքին գործերի ներկայացուցիչը: Անդրկովկասի եզդիների հոգևոր և աշխարհիկ առաջնորդները կազմված են շեյխի կասսայից: <https://www.encyclopedia.com/places/asia/iraq-political-geography/yezidis> (24.11.2021).

⁷ **Никитин В.**, Курды. Москва 1964, с. 126. Հոգևորականների կլանի ներկայացուցիչ - մոտավոր խմբ.:

⁸ Եզդիական շեյխերից մեկը հայտնում է, որ եթե մահացողը տառապում է և չի կարողանում մահանալ, ապա շեյխը կամ փիրը ծածկում է ափով նրա բերանը և խեղդում նրան: Սակայն այլ շեյխեր հերքում են այս երևույթի իսկությունը:

⁹ Վեց պարտադիր ու արտասովոր կանոն՝ եզդիների թաղման արարողակարգից, Շին (թաղում) «Կալբ ժը ախե բույա, ախ ժի վե բվա, թանե ռոհո նա մրիյա» (մարմինը ստեղծվել է հողից եւ հող էլ կդառնա, միայն հոգին է հավերժ), <https://iravunk.com/?p=163382&l=am>, (24.11.202):

մեկնեց ինձ)¹⁰։ Ուրիշ ընտանիքի շեյխը կամ փիրը իրավունք չունի ներկա գտնվելու մյուս ընտանիքի թաղման արարողակարգին (միայն որպես անհատ կարող է մասնակցել)։ Շեյխը և փիրը պարտավոր են թաղման արարողությունն անցկացնել ըստ իրենց վերապահված կանոնի։

Հետազոտելով հուղարկավորության ծեսը նկատում ենք, որ մահվանից անմիջապես հետո հանգուցյալին հագցնում են նոր մաքուր հագուստ և դնում պինդ, գորգով ծածկված պառկելաթախտի վրա՝ գլխով դեպի արևելք։ Հանգուցյալի ձեռքերն ու ոտքերը ծալում են խաչաձև։ Տղամարդկանց դեպքում վերնում դրվում են աջ ձեռքն ու ոտքը, իսկ կանանց դեպքում՝ ձախը։ Անմիջապես մահվանից հետո հարազատները բարձր ձայնով լալիս են, ողբում։ Արևի մայր մտնելուն պես լացն ու վայնասունը դադարում է, քանզի նրանց հավատալիքների համաձայն, հակառակ դեպքում հանգուցյալի գերեզմանը կխոնավանա¹¹։

Ի տարբերություն ներկայումս կատարվելիք արարողակարգի նախնիներն եզդիների շրջանում տարածված է եղել մի սովորույթ, երբ եթե ինչ-որ մեկը մահամերձ էր, ապա ընտանիքի անդամները կարող էին հոգևորականի հրավիրել կրոնական հիմն կարդալու, որպեսզի մահվան մահճում գտնվողը չտանջվի ու հեշտությամբ ավանդի հոգին։ Եթե մարդ է մահանում, նրա ազգականները նույն օրը գառ են զոհաբերում՝ նվիրված մահվան հրեշտակ Նասրդինին (*qurbānā Nāsirdīn*, *pog.*՝ «Նասրդինի *qnh*»)¹²։ Ըստ ժողովրդական ավանդության՝ այդ զոհով նրանք փորձում են սիրաշահել մահվան հրեշտակին, որպեսզի վերջինս չվնասի ընտանիքի մյուս անդամներին։ Զոհաբերված կենդանու միսն առանձին են եփում, սիրտն ու թոքը՝ առանձին։ Մինչև դա

¹⁰ Վեց պարտադիր ու արտասովոր կանոն՝ եզդիների թաղման արարողակարգից, երբ շեյխը կամ փիրը եւ մրիդը (աշխարհիկ դաս) կանգնում են իրար դեմ դիմաց, վկան հարցեր է տալիս, և երկու կողմի ներկայացուցիչներն ամեն հարցին 3 անգամ պատասխանում են «մըն կարուլա» (ինձ համար ընդունելի է), որից հետո հոգևոր դասի ներկայացուցիչը դառնում է իր մրիդի «Ֆարգը» (շեյխը կամ փիրը), <https://iravunk.com/?p=163382&l=am>, (31.01.2022)։

¹¹ Руденко М. Д., Курдская обрядовая поэзия, Москва, 1982, с. 59.

¹² Ամրյան Թ., Եզդիների կրոնական աշխարհայացքը, Եր., ԵՊՀ հրատ., 2016, 197 էջ։

սեղանի վրա դնելն ու ներկաներին մատուցելը յուրաքանչյուրից երեք բաժին առանձնացնում են և տանում հարևանների տուն: Զոհաբերված գառան գլուխը, ոտքերը (առանց խաշելու) և մորթին ուղարկում են հանգուցյալի «հանդերձյալ կյանքի եղբոր» տուն: Յուրաքանչյուր եզդի «ընտրում» է հանդերձյալ կյանքի եղբայր հոգևորականների այն ընտանիքից, ում հետ ավանդաբար կապված է իր գերդաստանը: Ըստ ավանդության՝ հանդերձյալ կյանքի եղբայր ունենալու կարգը հաստատել է Շեյխ Ադին¹³:

Հուղարկավորման արարողությունը եզդիների մոտ տևում է երեք օր (հնում մեկ օր էր և Իրաքի եզդիները այժմ էլ հետևում են այդ հնագույն սովորույթին) և այդ երեք օրվա ընթացքում ամեն օր շեխը եւ փիրը պետք է հանգուցյալի հոգու հանգստության համար աղոթեն՝ *“Qawla bejin”*¹⁴:

Հայաստանաբնակ եզդիների շրջանում, ըստ ուսումնասիրությունների մինչև քսաներորդ դարի կեսը տարածված էր հետևյալ սովորույթը. ողբերգական կամ անժամանակ մահվան դեպքում հանգուցյալի կինը, քույրերը կամ իգական սեռի այլ ազգականներ կտրում էին իրենց մազերն ու դնում հանգուցյալի կրծքին: Համեմատության համար նշենք, որ նման սովորույթ եղել է նաև հայերի շրջանում, այս դեպքում հանգուցյալի այրուն, ապա որպես նրան փոխարինող մաս հանդես էր գալիս նրա հյուսկեն ծամը, որը կտրվում էր ամուսնու մահվան դեպքում¹⁵, դրվում էր նրա կրծքին ու այդպես էլ թաղվում: Ննջեցյալի երիտասարդ լինելու պարագայում, կինը, մայրը, քույրը կամ աղջիկը՝ որպես սիրո նշան, իրենց խոր վիշտը փարատելու միտումով ամեն մեկն իր մազերից մեկ կամ երկու հյուս կտրել և դրել են դագաղի մեջ և կամ պահել են տանը՝ իրենց հագուստների սնդուկում, երբեմն էլ

¹³ Տես, **Նույն տեղում**, էջ 191:

¹⁴ Եզդիների, մոլականների, ասորիների, հրեաների բնակավայրեր, ընտանիքներ, <http://etnotourism.am/ru/amd/tours/67> (24.11.2021):

¹⁵ **Калоев Б. А.**, Обряд посвящения коня, ст. 44: Օսերը նույնիսկ կնոջ կտրված հյուսով խփում էին ձիուն և, խոսքն ուղղելով ննջեցյալին, ասում. «Ահա քեզ մտրակ, քեզ լինեն երկուսն էլ»(այսինքն ձին և կինը):

կախել են հանգուցյալի գերեզմանին մոտիկ մի ծառից¹⁶: Ըստ Թ. Ամրյանի իրականացրած ուսումնասիրության գոյություն ունեւր մի ավանդազրույց, համաձայն որի, այդ մազերը գերեզմանում կարող են փաթաթվել մահացածի կոկորդին. ուստի մազերը թաղում էին դազաղից դուրս¹⁷: Մինչ օրս եզդիների շրջանում պահպանվել է այն սովորությունը, որ կանայք սզալու ժամանակ հարվածում են իրենց ծնկներին, կրծքին կամ գլխին, երբեմն ճանկոում են իրենց դեմքը¹⁸: Սզալու ժամանակ կանանց կողմից սեփական մարմինը քերծելու օրինակ հանդիպում է նաև եզդիական կրոնական հիմներում:

Տղամարդիկ, որպես կանոն, սզալու ժամանակ չեն նստում մահացածի շուրջ. նրանք սզում են հոտնկայս՝ դիմավորելով և ճանապարհելով ցավակցելու եկող մարդկանց: Նախկինում գոյություն է ունեցել հետևյալ սովորությունը. կարմիր բծեր ունեցող սև կտոր էին ամրացնում փայտին և դրոշակի պես տեղադրում պատի կամ դռան վրա: Հանգուցյալի տղամարդ ազգականներից մեկը վերցնում էր այն ու լալով ընդառաջ գնում այցելուներին, հետո այն բերում էր ու տեղը դնում¹⁹: Համայնքում հայտնի և անվանի տղամարդկանց թաղման ժամանակ կատարում էին նաև *քոթալ կամ քոթալ (k'otal)* կոչվող արարողությունը, որի ընթացքում հանգուցյալի շորերը, զենքերը դնում էին նրա ձիու վրա և ձին պտտում տան շուրջ²⁰: Հարկ է նշել, որ նախկինում, երբ մահանում էր որևէ պատվավոր մարդ, ով առանձնանում էր քաջությամբ, խիզախությամբ, նրա պատվին հատուկ արարողություն էր կազմակերպվում, որը կոչվում էր *k'otal /քոթալ/*: Այդ արարողության իրագործման համար վերցնում էին ձի այն ծածկում կտորով, թամբի վրա դնում հանգուցյալի հագուստը, զենքը և

¹⁶ Նահապետյան Ռ. Ա., Մասունցիների ընտանեկան ծխակարգի մի քանի հարցեր, Բանբեր Երևանի համալսարանի», 3 (63), Երևան 1987 թ., էջ 58:

¹⁷ Ամրյան Թ., Եզդիների կրոնական աշխարհայացքը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2016, էջ 205:

¹⁸ Ավդալ Ա., Եզդի քրդերի հավատալիքները, Երևան, 2006, էջ 33:

¹⁹ Տես, նույն տեղում, էջ 206:

²⁰ Ավդալ Ա., Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Երևան, 1957, էջ 104; Ավդալ Ա., Եզդի քրդերի հավատալիքները, Երևան, 2006, էջ 37:

գլխարկը: Նիզակի ծայրին կամ գենքի փողին կապելով ծոպավոր թաշկինակ՝ ստեղծելով զինվորական հեղինակության նման մի բան: Հանգուցյալների ազգականներից մեկը տան մոտ սարքված հրապարակում ձին վարում էր այնքան ժամանակ, մինչ կողքի գյուղերից հանգուցյալի մահը բոթող լրաբերը և գյուղացիները չգային այնտեղ²¹: Հայերի շրջանում թաղման ծիսակարգում պահպանվել է նման հնավանդ սովորույթ ևս, երբ դագաղն արդեն դուրս են հանել տնից, և սգո թափորն ուղղվել է դեպի գերեզմանատուն, նախապես այդ նպատակի համար հակառակ ձևով թամբած, սևով զարդարված, գենք ու զրահը վրան, առանց հեծյալի առաջ են բերել հանգուցյալի ձին և դագաղի ետևից տարել մինչև գերեզմանոց, առանձին դեպքում էլ՝ պահել են գերեզմանի մոտ մինչև թաղման կարգի ավարտը²²: Տղամարդիկ երգում էին՝ հերոսական բնույթի երգեր, որ կոչվում էին *k'ilāmē k'otalē* (բոց, քոթալի երգեր)²³:

Երկու կամ երեք օր մահացածի դին հսկում են հանդերձյալ կյանքի եղբայրն ու փիրը: Երրորդ օրը առավոտյան վաղ (մենք ասում ենք *“stayrā sive ra”*)՝ նախքան արևի դուրս գալը, հանգուցյալի ջրով մաքրագործման կամ սրբագործման արարողությունն է կատարվում: Սա պետք է կատարեն հոգևորականը, որը անվանվում է *“birē axratē”* ընտանիքից: Եզդիների շրջանում չի պահպանվել *«դին լվացողի»* (պրս.՝ մորդեշուր, մուրդաշ, թյուրքալեզու ժողովուրդների շրջանում՝ յուղուվչի, դասուլ) ինստիտուտը: Երկու հոգևորականները՝ շեխն ու փիրը, հանգուցյալի մարմինը *mōr dikin* (մաքրագործում են) և միայն դրա իրավունքը ունեն հոգևորականները: Երբ իրականացնում են հանգուցյալին ջրով մաքրագործման արարողությունը, մահացածի վրա շեյխը լցնում է երեք գավաթ տաք ջուր : Այդ ժամանակ մի քանի հոգի հանգուցյալին պարփակում են վարագույրով : Եզդիական ավանդույթների համաձայն՝ երեք գավաթ ջուր պետք է լցնի Շեխսինների տոհմից մի

²¹ Руденко М., Курдская обрядовая поэзия, Москва, 1982, сс. 66

²² Նահապետյան Ռ.Ա., Սասունցիների ընտանեկան ծիսակարգի մի քանի հարցեր, Բանբեր Երևանի համալսարանի», 3 (63), Երևան 1987 թ., էջ 55:

²³ Руденко М., Курдская обрядовая поэзия, Москва, 1982, сс. 65-67:

շելիս²⁴։ Եթե շելիս բացակայում է, ապա ջուր լցնում է փիրը, հետևյալ բառերն արտասանելուց հետո՝ «**Չուրը Շելիս Օջահ Մինի ձեռքից**»։ Հանգուցյալի լողացնելու ժամանակ կարդում են «լվացման կավը»՝ *duā miri šūstinē*։ Այս աղոթքն ասում է նա, ով ջուր է լցնում (շելիս կամ փիր)։ Նրանք օգտագործում են ապակյա կամ կերամիկական գավաթ, որը լողացնելուց հետո կոտրվում է, իսկ խնամքով հավաքված բեկորները նետվում են հոսող ջրի մեջ²⁵։ Եվ քանի որ այդ արարողությունը իրականացնում են շելիս և փիրը, նրանք իրենց ձեռքերի վրա կրում են ձեռնոց, որը ևս հանդիսանում է սպիտակ փաթաթանի կտորից մի մաս, և այդ ձեռնոցով նրանք մաքրագործում են հանգուցյալին²⁶։

Երբ այդ արարողակարգն էլ է անցկացվում, դրանից հետո նույն շելին ու փիրը արդեն սուրբ մարմինը *kafan, kifin* «**Քաֆան**» (բոց. «պատանք»), *xalāt* կամ *kirāsē qīyāmatē* (բոց. «հանդերձյալ կյանքի շապիկ»)»²⁷ են անում (մարմինը պատում են սպիտակ փաթաթանով)։ Ինչպես ասվում է «**Մալակ Ֆարիսադին**» կոչված (հրեշտակ Ֆարիսադին) աղոթքում, անշուշտ, այն կարվում է նաև *birē āxratē-ի* ընտանիքի անդամի կողմից՝ սպիտակ գործվածքից, 11, 13 կամ 15 մետր երկարությամբ, նախկինում չօգտագործված ասեղով, որն այնուհետև անհրաժեշտ է դեն նետել²⁸։ Ըստ ավանդույթի թաղման արարողակարգը պիտի իրագործվի մեկ օրվա ընթացքում։ Ապա հետևում է դիակը լվանալու արարողությունը։ Այդ ընթացքում ամեն ինչ պատրաստվում է սավան կարելու համար²⁹։ Հանգուցյալին սավանը հագնում են միայն փիրն ու շելիսը,

²⁴ **Авдоев Т. В.**, Историко-теософский аспект езидизма, Приложение № 15. Май 2011, с. 280.

²⁵ Տես, **նույն տեղում**, էջ 281։

²⁶ Դաշտային աշխատանք, գյուղ Շամիրամ, հարցվածը՝ եզդի տղամարդ, 25.11.2021թ.։

²⁷ **Руденко М.**, Курдская обрядовая поэзия, Москва, 1982, с. 61.

²⁸ **Авдоев Т. В.**, Историко-теософский аспект езидизма, Приложение № 15. Май 2011, с. 281.

²⁹ Սավանը կարում է ընտանիքի անդամներից մեկը։ Այն կարվում է նոր ասեղով, որը հետո անպայման դեն են նետում։ Կտորը չեն կտրում մկրատով կամ դանակով, այլ պատռում են ձեռքով։ Այդ նույն կտորից էլ պատրաստում են վերնաշապիկ, որով հանգուցյալը պիտի ներկայանա Անեղ դատաստանին։

վացումից հետո ողջերն իրավունք չունեն դիպչելու հանգուցյալին, դա մեղք է համարվում: Գործվածքը պետք է պատռել ձեռքով, արգելվում է մկրատ կամ այլ կտրող առարկա օգտագործել քաֆանը կտրելու համար: Շեյխը ու փիրը հազցնելով հանգուցյալին, սկզբում հազցնում էին *čārā bičūk* կամ *“qarqar”* ապա Ահեղի վերնաշապիկը *“kirāsē qīyāmatē”* և այս ամենի վրա՝ *“čārā mazin”*: Այս ծիսակարգից հետո, որը կոչվում է *mōrīn*՝ կնքում, աշխարհականներին արգելվում է դիպչել հանգուցյալի մարմնին: Ենթադրվում է, որ այդ ժամանակվանից հանգուցյալը ոչ մի կապ չունի իր երկրային կեցության հետ, և նա պատրաստ է այս աշխարհից *dunyā*, տեղափոխվել հաջորդ աշխարհ՝ *āxirat*³⁰: Դրանից հետո հանգուցյալի՝ քաֆանով պատված դին դնում են հատուկ փայտե պատգարակի վրա և դնում սեղանի վրա՝ սենյակի մեջտեղում: Հարագատները կրկին հավաքվում են հանգուցյալի շուրջ և շարունակում բարձրաձայն սգալ: Ապա պատգարակը երեք անգամ բարձրացնում են և նորից դնում գետնին ու դրանից հետո միայն տանում գերեզման: Հանգուցյալին տանելու ժամանակ մտերիմները դիպչում էին նրա ոտքին, ապա ձեռքը մոտեցնում սրտին. քանզի հավատում էին, որ դա վերացնում էր հանգուցյալների հանդեպ վախը³¹:

Հանգուցյալին երկրին հանձնելու ծեսը կոչվում է *“tasmīlī Dawrēšē A’rd”* «Արդային վստահել Դարվեշին³²»: Մահացածի համար արթնանալը կոչվում է *“xērā mirīya”* «հոգեհաց»: Տարվա ընթացքում մարդու մահից հետո նշվում է հետևյալ հիշատակությունը.

1. *“nānē tabirkōlē”* («գերեզմանափորի սնունդ») - թաղման օրը.
2. *“sē rōjk”* — երրորդ օրը

³⁰ Авдоев Т. В., Историко-теософский аспект езидизма, Приложение № 15. Май 2011, с. 281.

³¹ Руденко М., Курдская обрядовая поэзия, Москва, 1982, с. 61

³² Руденко М. Б., Курдская обрядовая поэзия, Стр. 138. Դարվեշն Արդ - ըստ եզրի քրդերի հավատքի՝ «Երկրի և անդրաշխարհի տիրակալ», թաղման ժամանակ նրան դնում են հանգուցյալին «ծածկելու և պահպանելու» խնդրանքով:

3. *“haft rōjk”* – յոթերորդ օրը, որը կոչվում է նաև փոքր հիշատակի *“xērā bičūk”*

4. *xērā sālē* կամ *xērā mazin* (մեծ հիշատակություն)՝ մահվան տարելիցը³³:

Հետաքրքիր է, որ Հայերի շրջանում ևս կար հանգուցյալին լողացնելու սովորույթը, հանգուցյալին լողացրել են գոլ ջրով, տան դռան մոտի անկյունում, կամի կամ տախտակի վրա: Տղամարդկանց լողացրել են տղամարդիկ, կանանց՝ կանայք: Ընտանիքում մահացածության նոր դեպքը կանխելու միտումով ննջեցյալին լողացնելիս կաթսայի ջրից ոչ մի կաթիլ չպետք է ավելանար³⁴: Հնում հայերի շրջանում ևս գոյություն է ունեցել հանգուցյալին պատանքելու սովորույթը, պատանքն փաթաթել են ննջեցյալի իրանին այնպես, որ մարմինն ամբողջովին ծածկվի:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նախկինում եզդիները թաղման ծեսի ժամանակ դագաղ չեն կիրառել: Հայերի մոտ ևս նախկինում չի գործածվել դագաղը, ննջեցյալի դին եկեղեցի կամ գերեզմանատուն են տեղափոխել հատուկ պատգարակով, որը *նաջ* է կոչվել³⁵: Հանգուցյալին գերեզման են տարել պատգարակի վրա և թաղել շէխի ու փիրի կարած սպիտակ պատանքի մեջ դրած: Նույնիսկ կրոնական ավանդապատումներում հիշատակվում է ոչ թե դագաղի, այլ պատգարակի մասին: Կրոնական հիմներում պատգարակն անվանվում է *tābūt* կամ *sindirūk*: Հանգուցյալին դագաղի մեջ (նախկինում՝ պատգարակի վրա) դնելուց առաջ հոգևորականները արտասանում են *“Qawlē sindrūk”* (բոց.՝ «պատգարակի հիմն») հիմնը³⁶: Հայաստանաբնակ եզդիների շրջանում ընդունված է, որ գերեզմանափոսը փորեն հանգուցյալի ազգականները (օրինակ՝ մահացածի թոռները, եղբորորդիները և այլն): Նախկինում այն փորել են գյուղի չունևորները. նման դեպքերում գերեզմանափորին հատուկ հաց են տվել,

³³ Авдоев Т. В., Историко-теософский аспект езидизма, Приложение № 15. Май 2011, с. 284.

³⁴ Նահապետյան Ռ.Ա., Սասունցիների ընտանեկան ծիսակարգի մի քանի հարցեր, Բանբեր Երևանի համալսարանի, 3 (63), Երևան, 1987, էջ 54:

³⁵ Տես, նույն տեղում, էջ 54:

³⁶ Руденко М., Курдская обрядовая поэзия, Москва, 1982, с. 131-132.

որ կոչվել է *tavirkōlī /տև. վեքևում/*³⁷: Իրաքաբնակ եզդիների շրջանում գերեզմանի փոսը փորելը համարվում է գյուղի *“mijewir”* պարտականությունը. նրան այդ գործում օգնում են գյուղի տղամարդիկ³⁸: Ըստ կրոնական ավանդույթի՝ փոսը պետք է փորվի արևելքից դեպի արևմուտք: Եզդիները գերեզման են փորում հենց հուղարկավորման օրը, նրանց մոտ առկա է ստորերկրյա հուղարկավորման ձևը: Երբ թափորը մոտենում է գերեզմանին, գերեզման փորողները մոտենում և վերցնում են դագաղը, դնում գետնին՝ գերեզմանափոսի մոտ: Հանգուցյալին չեն համբուրում, քանի որ ըստ նրանց մոտ առկա պատկերացման, եթե հակառակն անեն հանգուցյալն այլևս չի արթնանա Ահեդ դատաստանի ժամանակ: Դագաղը գերեզմանափոս իջեցնելուց հետո ներկաները մի կողմ են քաշվում, մոտենում են փիրն ու շեյխը, ովքեր հատուկ գաղտնի աղոթք են կարդում, որը ողջերը չպիտի լսեն: Գերեզմանափոսը հողով ծածկելուց հետո ներկաները շտապում են մի-մի բուռ հող լցնել, քանզի հավատացած են, որ հողը տանում է հիվանդությունները³⁹:

Դաշտային ուսումնասիրությունները վկայում են, որ եզդիների մոտ հանգուցյալների հետ սպասք և սնունդ դնելու սովորույթ չկա: Սակայն ըստ որոշ վկայությունների՝ հնում, եթե հանգուցյալը առանձնանում էր քաջ և հերոսական մարդու համբավով, նրա հետ թաղում էին իր զենքերը: Գերեզմանի գլխամասում և դրան հանդիպակաց դնում են երկու քար, ընդ որում մինչ դրանք վերջնական հաստատելն այդտեղ, մի քանի անգամ տեղափոխում են: Հանգուցյալի մտերիմ ազգականները կտրում են իրենց վարսերը և դնում այդ քարի վրա⁴⁰:

³⁷ Ավդալ Ա., Եզդի քրդերի հավատալիքները, Երևան, 2006, էջ 33:

³⁸ Kreyenbroek Ph., Yezidism: Its Background, Observances and Textual Tradition, New York, 1995, p. 160.

³⁹ Պողոսյան Ս., Մահվան գաղափարը և հուղարկավորության ծեսերի խորհուրդը իրանական ժողովուրդների շրջանում, Երևան 2013, էջ 65:

⁴⁰ Այս սովորույթը գոյություն է ունեցել տարբեր այդ թվում այլ իրանական ժողովուրդների մոտ: Այն խորհրդանշում է հնում ամուսնու գերեզմանին կնոջը զոհաբերելու սովորույթը: Ժամանակի ընթացքում այս սովորույթը վերափոխ-

Թաղման օրը գերեզման գնալուց մի քանի թույլ առաջ կանանց հեռացնում են հանգուցյալի մոտից, տղամարդիկ բարձրացնում են դագաղը և երեք անգամ պտտում: Համեմատության համար նշենք, որ հայերի ավանդույթի դեպքում ննջեցյալին տնից դուրս հանելիս նաշը կամ դագաղը երեք անգամ տեղից կտրել և նույնքան անգամ էլ տան դռանն են խփել՝ մահը տանից հեռացնելու միտումով⁴¹: Այդ ընթացքում նրանք բարձր ձայնով արտասանում են *“birāō, birāō”* (թարգմ.՝ «ո՛վ եղբայր, ո՛վ եղբայր»), իսկ եթե մահացածը կին է, ասում են *“dāyē, dāyē”* (թարգմ.՝ «ո՛վ մայր, ո՛վ մայր»): այս արտահայտությամբ նրանք ցույց են տալիս իրենց ավստասանքը հանգուցյալին և հրաժեշտ տալիս նրան: Հանգուցյալի մարմինը պտտելը խորհրդանշում է այս աշխարհին հրաժեշտ տալն ու հանդերձյալ աշխարհի ճամփան բռնելը: Մահացածին դեպի գերեզմանատուն են տանում՝ հակառակ ուղղությամբ շարժելով: Ըստ ժողովրդական մեկնաբանության՝ դա նշանակում է, որ այս աշխարհը լքած մարդն այլևս սովորական մարդկանց պես ուղիղ չի գնում, այլ բնական վիճակին հակառակ է շարժվում: Գերեզման գնալու ճանապարհին բոլորը լուռ են, ոչ ոք սգո երգեր չի երգում, հոգևորականը կրոնական հիմներ է արտասանում և քայլում է բազմության առջևից: Սգո թափորին առաջնորդող շեյխին երբեմն ուղեկցում է նրա կինը (կամ մայրը)՝ ձեռքին բռնած իր թխած ծխականն խմորեղենը⁴²:

Երրորդ օրվանից հետո (ինչպես նշվեց հին ժամանակներում հանգուցյալին մեկ օր էին պահում, բայց երբ եզդիները ցրվեցին աշխարհով մեկ, շատերը չէին կարողանում մեկ օրվա ընթացքում մասնակցել իրենց հարազատների թաղման արարողությանը, դրա համար հարգելի պատճառներով հանգուցյալին պահեցին արդեն երեք օր) հանգուցյալին հանձնում են հողին: Նախքան դագաղը ամբողջությամբ փակելը, կա ևս մեկ պարտադիր քայլ,

վում է, որի արդյունքում կնոջը զոհաբերելու փոխարեն նրա մի մասն էին զոհաբերում:

⁴¹ **Նահապետյան Ռ. Ա.**, Սասունցիների ընտանեկան ծխակարգի մի քանի հարցեր, Բանբեր Երևանի համալսարանի», 3 (63), Երևան, 1987, էջ 54:

⁴² **Ամրյան Թ.**, Եզդիների կրոնական աշխարհայացքը, Երևան, 2016, էջ 210:

որը պետք է արվի հոգևորականի կողմից: Շէխը կամ փիրը (նա-
յած թե ով է հանդիսանում այդ պահին հանգուցյալի հանդերձյալ
կյանքի եղբայրը)՝ (*birē āxiratē*) (հանդերձյալ կյանքի եղբայր),
իրականացնում է իր վրա դրված վերջին քայլը, որին եզդիները
կոչում են մեկ բառով *gīrvān*⁴³: Դրանից հետո միայն դագաղը ամ-
բողջությամբ փակում են և թաղում: Երբորդ օրը՝ թաղման ժամա-
նակ, գերեզման են տանում նաև «*haft nān (բոց. յոթ հաց)*»⁴⁴ կոչ-
վող գաթան, որը բաժանվում է գերեզմանում գտնվող բոլոր
մարդկանց միջև՝ հանգուցյալին հողին հանձնելուց անմիջապես
հետո: Երբ հանգուցյալին իջեցնում են իր «հավերժ տունը», շէխը
կամ փիրը կանգնում է գերեզմանի գլխավերևում՝ հայացքով դե-
պի Արևելք, և աղոթում է հանգուցյալի հոգու հանգստության հա-
մար մինչև գերեզմանը վերջնական տեսքի բերելը:

Հանգուցյալին գերեզմանափոսի մեջ դնելուց առաջ հանդեր-
ձյալ կյանքի եղբայրն ուղղում է պատանքն այնպես, որ հանգու-
ցյալի դեմքն ազատ լինի կտորից⁴⁵: Իրաքաբնակ եզդիները հան-
գուցյալի դեմքի ծածկոցն անվանում են *qarqara*⁴⁶: Մարմինը հողին
հանձնելու ընթացքում հոգևորականն արտասանում է հողի հո-
վանավոր ու հանգուցյալի մարմնի մասին հոգ տանող *Դավրեշ
Արդին*⁴⁷ նվիրված կրոնական հիմներ⁴⁸: Ըստ եզդիական հավատա-
լիքների՝ Դավրեշ Արդը պիտի պահպանի հանգուցյալի մարմինը
մինչև Ահեղ դատաստանի օրը, իսկ գերեզմանը պետք է հսկի

⁴³ Հանդերձյալ կյանքի եղբայրը իր ձեռքերով երեք անգամ հանգուցյալի գլխա-
մասի սպիտակ փաթաթանը բացում է և նորից կապում: Այդպես երեք անգամ և
վերջին երբորդը կապելուց հետո այլևս չի բացում:

⁴⁴ Յոթ թիվը խորհրդանշում է յոթ հրեշտակներին և գաթան էլ պետք է պատ-
րաստվի յոթ համարով:

⁴⁵ Empson R., The Cult of the Peacock Angel, London, 1928, p. 62.

⁴⁶ Kreyenbroek Ph., Yezidism: Its Background, Observances and Textual Tradition,
New York, The Edwin Mellen Press, 1995, p. 167, n. 133.

⁴⁷ Руденко М. Б., Курдская обрядовая поэзия, с. 138. Դավրեշե Արդ - ըստ եզդի
քրդերի հավատքի՝ «Երկրի և անդրաշխարհի տիրակալ», թաղման ժամանակ
նրան դիմում են հանգուցյալին «ծածկելու և պահպանելու» խնդրանքով:

⁴⁸ Voskanyan V., Dawrēš A'rd, the Yezidi Lord of the Earth, Iran and Caucasus, Vol. 3-
4, Tehran, 1999-2000, pp. 159-166.

Շեյխ Մանդ կամ *Փիր Մանդե* գոռա սուրբը⁴⁹: Մահացածին գերեզմանաւփոսի մեջ դնելու ժամանակ հանդերձալ կյանքի եղբայրը պարտավոր է մտնել գերեզմանաւփոսի մեջ և մահացածին դմքով դեպի արևելք դնելով՝ կատարել մի արարողություն, որը կոչվում է *rahatkirinā mirī* (բոց.՝ «մահացածին հանգստացնել»): Այդ արարողությունն իրենից ներկայացնում է տղամարդ հանգուցյալի աջ ձեռքը ձախ ձեռքի վրա, աջ ոտքը՝ ձախ ոտքի վրա դնելը: Եթե հանգուցյալը կին է, ապա նրա ձախ ձեռքն են դնում աջ ձեռքի վրա, ձախ ոտքն էլ՝ աջի վրա⁵⁰:

Երբ արդեն մահացածին թաղում են և գերեզմանը վերջնական տեսքի բերում, երկու քար են վերցնում (քարը պետք է լինի աղյուսե) և երեք անգամ բարձրացնում ու իջեցնում, երրորդ անգամ իջեցնելուց հետո, այլևս չեն բարձրացնում և թողնում են գերեզմանի վրա: Այդ քարերին կոչում են *kēlik*: Հանգուցյալին հողին հանձնելուց հետո, հարազատները և բոլոր թաղմանը մասնակից մարդիկ ետ են վերադառնում մահացածի տուն, որտեղ նրա հարազատների կողմից *xēr* (հոգեհաց) է տրվում : Սեղանի շուրջ հավաքված ամբոխը՝ շէխի գլխավորությամբ, մահացածի հարազատներին իր ցավակցություններն է հայտնում և սգավորներին սփոփում են: Հանգուցյալին հողին հանձնելուց հետո, կա ևս մեկ արարողակարգ թաղման հետ կապված: Անպայման տան անդամները պետք է երեք օր իրար հետևից գնան գերեզման և մահացածի շիրիմին *“ĉ’irā vēxistin”* (կրակ վառեն): Դա արվում է նրա համար, քանի որ իրենք համարվում են նաև արևի ժողովուրդ (արևը դա իրենց կրոնական համակարգում սիմվոլ է, ինչպես խաչը քրիստոնեաների դեպքում): Այդ արարողակարգը անցկացնելուց հետո, ընդհանուր առմամբ լինում է արդեն վեց օր (երեք օր պահում են մահացածին և նոր թաղում, և երեք օր էլ նրան հողին հանձնելուց հետո շիրիմին կրակ են վառում՝ այդպիսով հասկանալի է դառնում, որ երեք օր է արդեն հողին է հանձնվել): Նոր մահացածի թաղման ամբողջ արարողակարգը

⁴⁹ **Asatrian G., Arakelova V.**, The Yezidi Pantheon, Iran and the Caucasus, Vol. 8.2, Leiden, 2004, p. 269.

⁵⁰ **Ամրյան Թ.**, Եզդիների կրոնական աշխարհայացքը, Երևան 2016, էջ 211:

հավուր պատշաճի թանկացնելուց հետո միայն, տան անդամները յոթերդ օրը նորից սեղան են գցում և հոգեհաց տալիս՝ ավարտին հասցնելով իրենց վրա դրված պարտավորվածությունը: Նրա մահից մեկ տարի անց, երբ լրանում է արդեն մահվան մեկ տարեկիցը, նորից պետք է մահացածի տան անդամները իրենց հանգուցյալի հոգու հանգստության համար հոգեհաց տան, որը կոչվում է *xērā sarē sālē* (մեկ տարեկիցին նվիրված հոգեհաց):

Ե՛վ հայաստանաբնակ, և՛ իրաքաբնակ եզդիները հանգուցյալին գերեզմանափոսի մեջ դնում են դեմքով դեպի արևելք⁵¹: Համաձայն սկզբնաղբյուրներից մեկի, մի ժամանակ Անդրկովկասի եզդիների շրջանում ընդունված է եղել ննջեցյալին թաղել նստած դիրքով՝ երեսը դեպի հարավարևելք դարձրած⁵²: Նախկինում իրաքաբնակ եզդիները հանգուցյալի հետ ոսկեդրամներ են թաղել՝ հավատալով, որ նա դրանք տալու է մահվան հրեշտակին⁵³: Համեմատության համար նշենք, որ հայերի դեպքում հուղարկավորության ժամանակ ննջեցյալի հետ երբեմն գերեզման են իջեցրել նրա ամենասիրած գենքը, որից նա չէր բաժանվել կենդանության օրոք, կին ննջեցյալի թաղման ժամանակ երբեմն հարսանեկան ընտիր հագուստ են իջեցրել գերեզման⁵⁴: Իրաքի մի շարք եզդիական գյուղերում ընդունված է եղել գերեզմանի վրա թողնել ուտելիք և ճիպոտ. հոգևորականը դիմել է մահացածին և խորհուրդ տվել ուտելիքն առաջարկել հրեշտակներին և գործի դնել ճիպոտը, եթե որևէ մեկն անհանգստացնի⁵⁵: Հանգուցյալի

⁵¹ **Açıkyıldız B.**, The Yezidis. The History of a Community, Culture and Religion, London, 2010, p. 103.

⁵² Տեր-Մանուկյան Ս., Եզդի-կուրմանժ, Ախալցխա, Տպարան եղբ. Մարտիրոսեանների, 1910, էջ 11:

⁵³ **Empson R.**, The Cult of the Peacock Angel, London, 1928, p. 63.

⁵⁴ **Նահապետյան Ռ. Ա.**, Սասունցիների ընտանեկան ծիսակարգի մի քանի հարցեր, Բանբեր Երևանի համալսարանի», 3 (63), Երևան 1987, էջ 56:

⁵⁵ **Kreyenbroek Ph.**, Yezidism: Its Background, Observances and Textual Tradition, New York, 1995, p. 161.

մահը սգալու և ողբի երգեր երգելու սովորություն իրենից ներկայացնում է առանձին արարողություն⁵⁶:

Մահացածին հողին հանձնելուց հետո հոգևորականները կրոնական հիմն են արտասանաում գերեզմանաթմբի վրա, ապա հանգուցյալի ազգականները գերեզմանատանը հոգեհաց են մատուցում: Մինչև հոգեհացի համար նախատեսված խաշած միսը գերեզման տանելը՝ դրանից երեք բաժին առանձնացնում են և տանում հարևանների տուն: Գերեզմանատանը սեղան նստելուց առաջ շեյխը օրհնում է սեղանը և կրոնական հիմն է արտասանում⁵⁷: Սեղան նստելուց առաջ որոշ ժամանակ շեյխն ու փիրը փորձում են նաև զրուցելով մխիթարել ներկաներին ու մահացածի ազգականներին: Մնացած ուտելիքը տալիս են իրենց տները վերադարձող հյուրերին ու ազգականներին կամ բաժանում հարևաններին ու անցորդներին⁵⁸: Հյուրերը հեռանում են, հանգուցյալի տուն գնում են մերձավոր ազգականները: Մարմինը հողին հուղարկավորելուց հետո, գերեզմանոցից վերադառնալուն պես, կազմակերպվում է հիշատակի ճաշ, որի ժամանակ *birē āxiratē*-ն արտասանում է հետևյալ կենացները, որոնց թիվը կենտ է.

⁵⁶ Ի տարբերություն կրոնական հիմների՝ սգո երգեր երգում են ոչ թե հոգևորականները, այլ հանգուցյալի ազգականները: Որպես կանոն, հանգուցյալի շուրջ նստում են կանայք, ովքեր լաց են լինում ու գովաբանում հանգուցյալին, նրան նվիրված երգեր հորինում կամ երգում ժողովրդի շրջանում տարածված ողբերգերը⁵⁶: Նման երգերն ունեն իրենց հատուկ բառապաշարն ու այլաբանությունների համակարգը. այդ երգերում, օրինակ, տղամարդ հանգուցյալն անվանվում է *sīyār* (բոց. «ձիավոր»), *šangasīyār* (բոց. «հրաշալի ձիավոր»), *gulā sīyārā* (բոց. «ձիավորների ծաղիկ»), կինը՝ *dalālē* (բոց. «սիրելի»), *dalālā mālē* (բոց. «տան սիրելի») և այլն⁵⁶: Նման սովորությո հայերի մոտ ևս եղել է, մահը վրա հասնելուց հետո պոռթկացել է լացն ու ողբը, աղմուկն ու աղաղակը: Որոշ վայրերում սուգն ու լացը ավելի հուզիչ դարձնելու համար «լալիք» (սգերգ) ասող կանանց են հրավիրել: Լալկան կանայք ննջեցյալի բարեմասնությունները նշելիս գովերգել են նրա հագուստ-կապուստը, զենքը ու զրահը, ձին ու ձիավարությունը, այրի թողած կնոջն ու ողբացած զավակներին⁵⁶: Ի դեպ, ողբի, սուգ ու շիվանի աստիճանն էլ պայմանավորված է եղել հանգուցյալի «թանկ մեռել» կամ «էժան մեռել» լինելուց⁵⁶:

⁵⁷ Ավդալ Ա., Եզդի քրդերի հավատալիքները, Երևան, 2006, էջ 133:

⁵⁸ Ամրյան Թ., Եզդիների կրոնական աշխարհայացքը, Երևան, 2016, էջ 212:

• առաջին բաժակը բարձրացվում է եզդիական հավատքի համար.

• երկրորդը՝ Տավուսիա Մալաքի համար;

• երրորդը՝ Դարվեշե Արդի համար՝ երկրի Տերը;

• չորրորդը՝ Շեհ Ալի Շամսի (Շեքս Էլի Շեմսե) համար՝ թափառականների հովանավորը.

• հինգերորդը՝ «գերեզմանների մարդկանց» (*Pirmandē gōra*) տոնի համար

• վեցերորդը՝ Շեհ Ադիի համար;

• յոթերորդ՝ օրվա հացի, օրվա հաց տվողի համար (*qedré risqa, yê ku risq dide saxa*)⁵⁹

Թաղումից երեք օր անց (երեքշաբթի երեկոյան և չորեքշաբթի առավոտյան կամ կիրակի երեկոյան ու երկուշաբթի առավոտյան) նորից են հոգեհաց մատուցում: Հանգուցյալի հագուստները դնում են ստեռի վրա, շեյխը կրոնական հիմներ է կարդում ստեռի մոտ, ապա այդ հագուստները համապատասխան նվերի հետ հանձնվում են մահացածի հանդերձյալ կյանքի եղբորը (կամ քրոջը, եթե հանգուցյալը կին է):

Ինչ վերաբերվում է տարածված մի սովորույթի, այն է, որ եզդիների համար մեղք է համարվում քառասունք նշելը. հոգևորականի գլխին հիշատակի սեղանի շուրջ կենացներ ասելու սովորույթը, ինչպես նաև քառասուներորդ օրը հիշատակելը, չի համապատասխանում եզդիական կրոնական պատվիրաններին, որոնք կապված են մեռելների պաշտամունքի հետ: Այս ավանդույթները, ինչպես նաև հիշատակի ժամանակ ալկոհոլային խմիչքների օգտագործումը նախկին ԽՍՀՄ եզդիները փոխառել են Կովկասի և Ռուսաստանի քրիստոնյա ժողովուրդներից, և, հետևաբար, դրանք չեն կարող ընկալվել որպես եզդիների ավանդական ծեսեր⁶⁰: Հարկ է նշել, որ ներկայումս հայաստանաբնակ եզդիները, որպես կանոն, մահից մոտ երեսուն-երեսունհինգ օր հետո (ոչ քառասուներորդ օրը) հոգեհաց են մատուցում, այդ օրը

⁵⁹ Руденко М. Б., Курдская обрядовая поэзия, с. 59-65.

⁶⁰ Теймураз Васильевич Авдоев, Историко-теософский аспект езидизма, Приложение № 15. Май 2011, с. 281.

սգի մեջ գտնվող տղամարդիկ սափրվում են, կանայք փոխում են սգո նշան համարվող սև գլխաշորը: Միայն հանգուցյալի մերձավոր ազգական համարվող կանայք շարունակում են մի տարի կրել սև գլխաշորը: Հանգուցյալի ընտանիքի անդամները ժամանակ առ ժամանակ այցելում են գերեզմանատուն և մի տարի շարունակ ամեն հինգշաբթի հանգուցյալի հոգեբաժին կերակուրը (*nānē miriyā*, բոց.՝ «մահացածների հաց») տալիս են որևէ հարևանի⁶¹:

Հանգուցյալին թաղելուց անմիջապես հետո գերեզմանում կազմակերպվում էր հացկերույթ, որը ոչ թե հոգեճաշ էր, այլ այսպես ասած «գերեզմանափորների ընթրիք»: Տուն վերադառնալուց հետո էլ կանայք անպայման մաքրում էին այն վայրը, որտեղ դրված էր եղել հանգուցյալի դին⁶²: Ապա հոգեճաշ է մատուցվում, սակայն ոչ հանգուցյալի տանը, քանզի հուղարկավորմանը հաջորդող երեք օրերի ընթացքում հանգուցյալի տանը կրակ չէր վառվում և կերակուր չէր պատրաստվում: Հոգեճաշի ժամանակ շեյխը կամ փիրը հատուկ կենացներ են արտաբերում, ապա աղոթում: Հոգեճաշի ավարտին նրանք ներկաների անունից ցավակցում են տանտերերին: Սա իրենից ներկայացնում է հատուկ արարողություն և եթե ազգականներից կամ ընկերներից մեկը ներկա չէր եղել հուղարկավորությանը և չէր կարողացել ցավակցել, որոշ ժամանակ անց գալիս էր և որևէ նվեր էր բերում:

Հայաստանաբնակ եզդիները տարվա ընթացքում տարբեր առիթներով այցելում են իրենց հարազատների գերեզմաններին: Օրինակ՝ կրոնական տոներից առաջ բոլորն այցելում են իրենց հարազատների շիրիմներին: Բացի այդ, տարվա մեջ մի օր նախատեսված է մահացածների հիշատակի և գերեզման այցելելու համար: Այդ օրն անվանում են *řōžā miriyā* (բոց.՝ «մահացածների

⁶¹ Ամրյան Թ., Եզդիների կրոնական աշխարհայացքը, Երևան, 2016, էջ 212:

⁶² Սա խոսում է եզդիների մոտ դիակի՝ սրբազանության տեսանկյունից անմաքուր լինելու մասին: Ի տարբերություն նրանց՝ մահմեդական քրդերը հավատացած էին, որ այն վայրը, որտեղ դրված է եղել դին սկզբնական շրջանում չափտի մաքրվի, որպեսզի այնպես չդիտվի, թե նրանք հանգուցյալին անմաքուր են համարում:

օր»)⁶³ կամ *řōžā mazalā* (բոց.՝ «գերեզմանների օր»): Հանգուցյալներին գերեզման այցելում էին նաև մեծ տոների՝ Նոր Տարվա և Խրդոր- Նաբիի օրերին: Տարվա մեջ 1 օր՝ հունիսի 24-ը հատուկ նվիրված է հանգուցյալներին, որի ժամանակ մարդիկ գնում են իրենց հարազատների գերեզմաններ և այնտեղ աղքատներին ողորմություն են բաժանում սննդի և խմիչքի տեսքով⁶⁴: Հանգուցյալի լավագույն զգեստները նվիրում են փիրին և շեյխին: Մնացածը լվանում կապում են և այդպես պահում մեկ տարի: Մեկ տարի անց էլ այդ հագուստը բաժանում են աղքատներին:

Վաղ առավոտից շեյխն ու փիրը շրջում են գերեզմանատանն ու կրոնական հիմներ արտասանում, այցելուները մոտենում են իրենց ազգականների գերեզմանաքարերին, համբուրում դրանք, արտասվում, հետո սեղան են նստում հենց գերեզմանատանը⁶⁵: Որոշ եզդիական գյուղերում նաև ընդունված է ուտելիք թողնել շիրիմների վրա: Եզդիները, որպես կանոն, ընտանիքներով իրենց ազգականների շիրիմներին այցելել և այցելում են *Čarsamā Sarē Sālē* (բոց.՝ «տարեսկզբի չորեքշաբթի») կոչվող տոնի օրը. այդ օրը ոչ միայն տոն է եղել, այլև համարվել է հանգուցյալների հիշատակման օր⁶⁶: Հետո որոշ ժամանակ Խորհրդային Միության տարածքում բնակվող եզդիների շրջանում գերեզմաններ այցելելու օր է համարվել հունիսի առաջին հինգշաբթի օրը⁶⁷: Հետագայում Հայաստանի տարբեր եզդիական գյուղերում բնակվող եզդիները փոխել են այդ օրը՝ հարմարեցնելով իրենց առօրյային ու կենցաղին: Իրաքաբնակ եզդիները մահացածների հիշատակի օրը նշում են դեկտեմբերին⁶⁸: Այդ օրը շարժական է և հիշատակվում է

⁶³ **Аристова Т.**, Курды Закавказья: историко-этнографический очерк, Москва, 1966, с. 175.

⁶⁴ Հանգուցյալի հիշատակին տրվող հոգեճաշն ու նման արարողություններ հանգում են հին՝ հանգուցյալների և նախնիների պաշտամունքի հետ կապված հանգուցյալներին կերակրելու հնագույն սովորույթին:

⁶⁵ **Ամրյան Թ.**, Եզդիների կրոնական աշխարհայացքը, Երևան, 2016, էջ 213:

⁶⁶ Նույն տեղում, էջ 213:

⁶⁷ **Dîma Pîr**, Roja mezela, anko roja bîranîna mirîyan li cem êzdîyê Sovêta berê - Cejnên Ezîdîyan, Kurdistan-Hewlêr, 2013, rûp. 220:

⁶⁸ Şêx Îdo Baba, Çarşema Bêlîndê - Cejnên Ezîdîyan, Kurdistan-Hewlêr, 2013, rûp. 211.

դեկտեմբերի երրորդ ուրբաթ օրը⁶⁹, այն կոչվում է *jažnā Bēlinda* (բռց.՝ «Բելինդա տոն»)։ Այդ օրը առավոտից կավալները նվագելով ու կրոնական հիմներ արտասանելով պտտվում են գերեզմանատանը, իսկ ֆակրայաները խմբերով շրջում ու խոնկ են ծխում։ Գերեզման այցելած մարդիկ ուտելիք են թողնում իրենց ազգականների շիրիմների վրա։ Տուն վերադառնալով՝ նրանք հանգուցյալների հոգու համար ուտելիք են տալիս նաև հարևաններին, անցորդներին։ Վրաստանի և Հայաստանի եզդիների գերեզմանատներում կարելի է հանդիպել կենդանիների արձաններ հիշեցնող շիրմաքարեր. մի ժամանակ ընդունված ու տարածված են եղել խոյի, ձիու տեսքով շիրմաքարերը։ Ժողովուրդը սրան հետաքրքիր մեկնաբանություն է տվել. օրինակ՝ խոյը մեկնաբանում են որպես արևի և իշխանության խորհրդանիշ, եթե խիզախ ու արի տղամարդ էր մահանում, ապա նրա գերեզմանին դնում էին ձիու արձան հիշեցնող շիրմաքար, առյուծի արձանի տեսք ունեցող շիրմաքարը վկայում էր, որ դրա տակ հանգչում է քաջ անձնավորություն և այլն⁷⁰։ Ունևոր մարդիկ իրենց ազգականների շիրիմների վրա դամբարան հիշեցնող գմբեթանման ծածկեր էին կառուցում⁷¹։ Երբեմն եզդիները դնում են շիրմաքարեր, որոնք աստիճանաձև են և հանդիպում են նաև Իրաքի եզդիական գերեզմաններում։

Minasyan Astghik

Armenian State Pedagogical University

arev055@mail.ru

ON SOME FEATURES OF THE YAZIDI BURIAL RITUAL

In science, the interest in rituals and customs is growing, because their study provides an opportunity not only to reveal the stages and

⁶⁹ **Heso Mecîd**, Tûafên êzdiyan - Cejnên Ezidiyan, Kurdistan-Hewlêr, 2013, rûp. 164:

⁷⁰ **Dîma Pîr**, Roja mezela, anko roja bîranîna mirîyan li cem êzdîyê Sovêta berê - Cejnên Ezidiyan, Kurdistan-Hewlêr, 2013, rûp. 219-220:

⁷¹ **Dîma Pîr**, Roja mezela, anko roja bîranîna mirîyan li cem êzdîyê Sovêta berê - Cejnên Ezidiyan, Kurdistan-Hewlêr, 2013, rûp. 220:

nature of the historical development of this cultural phenomenon, but also to penetrate the most diverse spheres of the people's siconormative culture by referring to its unique ways of living, to highlight many unique features of the ethnic tradition. Therefore, there is a need to comprehensively study the ethno-cultural heritage of the past, also in the sense that all the positive and original folk, so that all the positive and genuine people that have withstood the test of time and reached us, can be used for the fulfillment of today's problems, seasoned with the researches we have carried out.

The funeral rite is one of the most closed and least modified ceremonies. The most important components of the funeral rite are offering a sacrifice, giving a sacrifice, reciting appropriate religious hymns by the clergyman. Among the Yazidis, the funeral ceremony is based on the belief in the strong bond between the dead and the living.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ամրյան Թ.**, Եզդիների կրոնական աշխարհայացքը, Եր., ԵՊՀ հրատ., 2016:
2. **Ավդալ Ա.**, Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1957, Ավդալ Ա., Եզդի քրդերի հավատալիքները, Երևան, «Գիտություն», 2006:
3. **Ավդալ Ա.**, Եզդի քրդերի հավատալիքները, Երևան, «Գիտություն», 2006:
4. **Տեր-Մանուելյան Ս.**, Եզդի-կուրմանժ, Ախալցխա, Տպարան եղբ. Մարտիրոսեանների, 1910:
5. **Նահապետյան Ռ. Ա.**, Մասունցիների ընտանեկան ծիսակարգի մի քանի հարցեր, Բանբեր Երևանի համալսարանի», 3 (63), Երևան, 1987:
6. **Պողոսյան Ս.**, Մահվան գաղափարը և հուղարկավորության ծեսերի խորհուրդը իրանական ժողովուրդների շրջանում, , Երևան 2013:
7. **Սեյդեհինասիմ Ֆ.**, Ծեսերի և ավանդույթների փոփոխությունները կրոնափոխ եզդիների (Եհովայի վկաներ) շրջանում:
8. **Авдоев Т. В.**, Историко-теософский аспект езидизма, Приложение № 15. Май 2011.
9. **Аристова Т.**, Курды Закавказья: историко-этнографический очерк, Москва, «Наука», 1966.

10. **Никитин В.**, Курды. Москва 1964.
11. **Руденко М. Д.**, Курдская обрядовая поэзия, Москва, 1982.
12. **Теймураз В. А.**, Историко-теософский аспект езидизма, Приложение № 15. Май 2011, ст.281.
13. **Asatrian G.**, Arakelova V., The Yezidi Pantheon, Iran and the Caucasus, Vol. 8.2, Leiden, 2004.
14. **Açıkyıldız B.**, The Yezidis. The History of a Community, Culture and Religion, London, I.B.Tauris, 2010.
15. **Empson R.**, The Cult of the Peacock Angel, London, Harry Forbes Witherby, 1928.
16. **Kreyenbroek Ph.**, Yezidism: Its Background, Observances and Textual Tradition, New York, The Edwin Mellen Press, 1995.
17. **Voskanyan V.**, Dawrêş A'rd, the Yezidi Lord of the Earth, Iran and Caucasus, Vol. 3-4, Tehran, 1999-2000.
18. **Dîma Pîr**, Roja mezela, anko roja bîranîna mirîyan li cem êzdiyê Sovêta berê – Cejnên Ezidiyan, Kurdistan-Hewlêr, 2013:
19. **Şêx Îdo Baba**, Çarşema Bêlîndê – Cejnên Ezidiyan, Kurdistan-Hewlêr, 2013.
20. **Heso Mecîd**, Tûafên êzdiyan – Cejnên Ezidiyan, Kurdistan-Hewlêr, 2013:
21. Եզդիների, մոլականների, ասորիների, հրեաների բնակավայրեր, ընտանիքներ, <http://etnotourism.am/ru/amd/tours/67>, հասանելի է եղել 24.11.2021թ.:
22. Եզդիների կրոնական աշխարհընկալումը, <https://zbosavari-home.blog/2018/11/17/%D5%A4%D5%A1%D5%BD%D5%A5%D6%80-%D5%AF%D6%80%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%5%D5%AC%D5%AF%D6%80%D5%B8%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/> (24.11.2021)
23. Վեց պարտադիր ու արտասովոր կանոն՝ եզդիների թաղման արարողակարգից, <https://iravunk.com/?p=163382&l=am>, հասանելի է եղել (24.11.2021)
24. **Cherchi M., Platz, S. & Tuite, K.** (1996). Yezidis: Encyclopaedia of World Cultures. <https://www.encyclopedia.com/places/asia/iraq-political-geography/yezidis>: (24.11.2021). Դաշտային աշխատանք, գյուղ Շամիրաֆ, 25.11.2021թ.: